

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

Չիվա ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար՝ **Նահրի Սարգսյան**

Հաստատվել է համայնքի ավագանու 23.12.2016թ. թիվ 37-Ն որոշմամբ

2016թ., գ.Չիվա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը.....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ.....	8
2.5. Չարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....	10
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն.....	11
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	12
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....	12
3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում.....	12
4. ՀԶԾ ֆինանսավորում.....	18
5. ՀԶԾ մոնիթորինգ.....	19

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Չիվա համայնքը ունի 856 մշտական բնակչություն, որից շուրջ 646-ը՝ 18-60 տարեկան: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բուրր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:


Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է: Համայնքի մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում ինչը խոչընդոտում է միջոցառումների և հանդիպումների կազմակերպմանը: Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանցային կենտրոններ:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքում առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների


- Խմելու ջրի ջրագծի կառուցում
- Գազաֆիկացում
- Անավարտ կոյուղագծի, շինարարական աշխատանքների վերսկսում
- Մշակույթի տան հիմնանորոգում
- Ոռոգման ցանցի բարեկարգում
- Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում

Համայնքը համագործակցում է մի շարք ծրագրերի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջականները և ներգրավվել նոր ծրագրեր, մասնավորապես այժմ համայնքը համագործակցում և իրականացնում է փոքր ծրագրեր:

Բնակչության տարիքային սանդղակ



Բնակչության բնական աճը(2014-2016թթ.)




Համայնքի վարչական տարածքը 3272 հա է, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3175 հա:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, առողջության կենտրոն, մշակույթի տուն, գրադարան:

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ստորև ներկայացված է համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ.:

Չիվա համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ.



2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները կազմում են 24735,9 հազար դրամ, որից սեփական եկամուտներ՝ 3835,8 հազար դրամ:

Համայնքում այժմ գործում են 5 անհատ ձեռնարկատերեր, որից 5 մանրածախ վաճառքի կետեր:

Համայնքի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է հիմնականում քաղաք երևանում:

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ, մասնավորապես համայնքի տարածքում է գտնվում մատուռ, նախկին գյուղատեղի, որը յուրօրինակ է հատուկ պահպանման հուշարձան»-ի ցանկում:

Այժմ համայնքում գործում են թվով 5 հյուրատներ, որոնք հաջողությամբ գործում են, սակայն կարիք կա ավելացնելու համայնքում հյուրատների թիվը, որը նախատեսվում է կատարել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ (որի փորձը արդեն կա):

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են թվով 62(2016թ.տվյալներով) աշակերտներ: Դպրոցում գործում է նախադպրոցական կրթական ծառայություն 4-5 տարեկան երեխաների համար, որոնց թիվը 2016 թ. կազմում է թվով 13:

Համայնքում նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 25: Թոշակառուների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 113, որից հաշմանդամության թոշակ 31, կենսաթոշակառու 82:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիների համայնքը պատրաստվում է համագործակցել ՀՀ կառավարության, միջազգային և տեղական կազմակերպությունների, ինչպես նաև հաստիքային ծրագրերի հետ:

Առաջիկայումս խստագույն է շարունակել համագործակցությունը իրականացնելով նոր ծրագրեր:

Համայնքը աշխատանքներ է տանում համագործակցելու Հայաստանի «Ֆուլեր տնաշինական կետեր» հետ,


նպատակ ունենալով համայնքի անապահով տանկարիք ունեցող ընտանիքներին օգնել և աջակցելու տանվերանորոգման կամ կառուցելու հարցում:

Համայնքը պատրաստակամ է համագործակցել անհատներ, ընտանիքներ հետ, ովքեր կցանկանան որևէ ներդրում անել համայնքում:


2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2013-2015թթ. փաստացի տվյալներով աճել են:

Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2013-2015թթ.:



2016 թվականի համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են 3427.4 հազար դրամ, 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 3835,8 հազար դրամ:



2016 թվականին նախատեսված ընդհանուր եկամուտների չափը կազմում է 21577,0 հազար դրամ, 01.11.2016թ. դրությամբ համայնքի բյուջեի եկամուտները կատարվել են 38121,9 հազար դրամ: 2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով նախատեսվել է ընդհանուր եկամուտներ՝ 24735,9 հազար դրամ:

Առաջիկա 5 տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Չիվա համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է: և հանդիպումների կազմակերպմանը:

Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ, համայնքի մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում ինչը խոչընդոտում է միջոցառումների կազմակերպմանը մշակույթի տանը, այս ամենը նպաստում են երիտասարդների կողմից համայնքը լքելուն:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքի առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- խմելու ջրի ջրա-ծի կառուցում
- Գազաֆիկացում
- անավարտ կոյուղագծի շինարարական աշխատանքների վերսկսում
- մշակույթի տան հիմնանորոգում

- ոռոգման ցանցի բարեկարգում
- ներհամայնքային ճանապարհների վերանորոգում

Վերոնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

<p style="text-align: center;">Ուժեղ կողմեր</p> <ol style="list-style-type: none"> 1. Չքոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ 2. Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ 3. Համայնքում գործող փոքր բիզնեսներ 	<p style="text-align: center;">Թույլ կողմեր</p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների փոքր չափաբաժին 2. Չբաղվածության խնդիր 3. Սոցիալապես անապահով բնակիչների սեփական
<p>SWOT վերլուծություն</p>	
<p style="text-align: center;">Հնարավորություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնք աղցեղող զբոսաշրջիկների աճի տեմպեր 2. ՏԻՄ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բնույթ և աճ 3. Համագործակցության շրջանակների ընդլայնում 	<p style="text-align: center;">Սպառնալիքներ</p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնքում բնակչության անդադրյալ աճ 2. Սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի վատթարացում

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած գրոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղավաժություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հիմնորդ բաժնում:

3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

Ծրագիր 1

Համայնքի խմելու ջրի ջրագծի կառուցում:

Համայնքի համար խիստ ծառայացած հարց է խմելու ջրի ջրագծի կառուցումը:

Խմելու ջրի ջրագիծը կառուցվել է 1968-70ական թվականներին, կատարվել է մասնակի նորոգում: Ներկայումս շատ վթարային վիճակ է: Սպառնում են համաճարակի բռնկումներ: Ծրագիրն իրականացնելու համար կպահանջվի 8,5 մլն. դրամ, որի համար պետք է դիմել պետական կառույցներին, դոնոր կազմակերպություններին, ինչպես նաև կատարել համայնքային ներդրում:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017-2018թթ.:

Ծրագիր 2

Համայնքի գազաֆիկացում:

Համայնքն ապահովված չէ բնական գազով, որի բացակայությունը լուրջ խոչընդոտ է

բնակչության տնտեսական զարգացման համար: Բնակիչներն օգտագործում են անհամեմատ քանկ հեղուկ գազ, հաճախակի են ծառեր հատվում:

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերտեսչությունների և ՀՀ կառավարության առջև:

2017թ.-ին բարձրացնել գազաֆիկացման հարցը:

ԾՐԱԳԻՐ 3

Համայնքի անավարտ կոյուղագծի շինարարական աշխատանքների վերսկսում:

Համայնքում կառուցվել է կոյուղագիծ, որն սպասարկում է համայնքի կենտրոնից մինչև մայրուղի ընկած տարածքի տնտեսություններին:

Ծրագիրն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերտեսչությունների և ՀՀ կառավարության առջև:

Ծրագիրն ավարտելու համար կպահանջվի 5,0 մլն դրամ:

Աշխատանքները վերսկսել 2017թ. գարնանը:

Ծրագիր 4

Մշակույթի տան հիմնանորոգում.

Մշակույթի տանն է տեղեկայված համայնքապետարանը, բուժ. կետը, փոստը:

Մշակույթի տան կառուցումից ի վեր 1970թ.-ից առ այսօր վերանորոգման չի ենթարկվել: Հիմնանորոգումից հետո համայնքում կաշխուժանա մշակույթային կյանքը, կբացվեն տարբեր խմբակներ, երիտասարդությունը կակտիվանա:

Ծրագրի իրագործման համար կպահանջվի 5,0 մլն. դրամ:

Ծրագիրն իրականացնել 2018-2019թթ.-ին:

Ծրագիր 5

Ոռոգման ցանցի բարեկարգում

Ոռոգման ցանցի անբարեկարգ լինելու պատճառով բավականին ջրի կորուստ է լինում, որն ազդում է հողատիրոջ ֆինանսի վրա; Այս պատճառով էլ մարդիկ շատ

ժամանակ չեն ուզում օգտվել ոռոգման ցանցից:

Ոռոգման համակարգի բարեկարգման արդյունքում մարդիկ կավելացնեն այգիների հիմնումը, որն էլ կբարելավի ժողովրդի սոցիալական վիճակը, կմեղմվի արտագաղթը:

Ծրագրի իրականացման համար կպահանջվի 5,5 մլն. դրամ:

Ծրագիրը սկսել 2017թ. գարնանը:

Ծրագիր 6

Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում

Տարեկան երկու անգամ խճապատվում են ներհամայնքային ճանապարհները, սակայն

անձրևաջրերի, երբեմն կենցաղային ջրերի պատճառով, քայքայվում են ճանապարհները, որոնք խնդիր են առաջացնում բնակչության և մեքենաների երթևեկության համար:

Ներհամայնքային ճանապարհների վերանորոգումը՝ կբարելավի անց ու դարձը նաև

առևտրական մեքենաների համար, ինչը խիստ անհրաժեշտ է բնակչության մթերքի առևտրի համար:

Ծրագրի համար կպահանջվի 7,0 մլն. դրամ:


2017թ.-ից սկսել ծրագիրը իրա-ործ»լ:

4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների : Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Ստորև ներկայացվում է 2017-2021թվականների ընթացքում վերոնշյալ ծրագրերի ր աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը:



Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներիժգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

5. ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր է:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները: